

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի
մարտի 27-ին կայացած գիտական Խորհրդի N10 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 31-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. Դասախոսների որակավորման բարձրացման ընթացքն ամբիոններում
/զեկ. ամբիոնի վարիչներ/
2. Առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքներն ամբիոններում
/զեկ. կրթական ծրագրի ղեկավարներ/
3. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի քննարկումն ու հաստատումը
/զեկ. փոխղեկան Վ.Պ.Վարդանյան/
4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքն ամբիոններում
/զեկ. ամբիոնի վարիչներ/
5. “ԵՊՀ-ի պրոֆեսոր-էմերիտուս” պատվավոր կոչման թեկնածուի առաջադրում
6. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՑԻՆ.** Ս.Ռ.Սուվարյանի, Վ.Պ.Վարդանյանի, Ա.Թ.Գրիգորյանի, Մ.Ս.Մկրտչյանի, Վ.Վ.Գրիգորյանի և Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումն ամբիոններում դասախոսների որակավորման բարձրացման վերաբերյալ: Ուշադրություն հրավիրվեց վերապատրաստման նոր կարգերի, տարիքային ցենզի և վերապատրաստման ընթացքում ձեռք բերած կրեդիտների կետերին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը խոսեց որակավորման վերապատրաստումների նեղ մասնագիտական ուղղությունների

առաջնակարգության մասին: **Դեկան Մ.Ա.Գրիգորյանն** իր խոսքում նշեց վերապատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևորության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնների կողմից առաջարկություններ ներկայացնել ռեկտորատ:

2. ԼՍԵՑԻՆ. Կրթական ծրագրերի ղեկավարներ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի, պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի, դոց.Ս.Ս.Քելյանի** հաղորդումը ուսանողների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ: Նշեցին, որ ուսումնական տարին սկսելուց առաջ՝ օգոստոսին հարկավոր է կազմել և մշակել ուսանողների հետ տարվող աշխատանքների գործողությունների ծրագիր-ուղեցույց, ըստ որի յուրաքանչյուր դասավանդող կծանոթացնի ուսանողներին ուսումնական, մեթոդական հարցերին: Անհրաժեշտ է համակարգել ուսանողների հետ տարվող բազմաբնույթ աշխատանքը: Քայլեր ձեռնարկել, որպեսզի առաջին կուրսեցին արագ ինտեգրվի համալսարանական կյանքին: Ուսանողների հետ տարվող աշխատանքների ամբողջ պատասխանատվությունը կրթական ծրագրի ղեկավարի վրա դնելն անարդյունավետ է: Ցանկալի կլիներ կուրատորների ինստիտուտի վերականգնումը՝ յուրաքանչյուր կուրսն ունենա իր կուրատորը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. Ուսնող **Ս.Սահակյանն** առաջարկեց ուսանողների հետ տարվող աշխատանքների իրականացումը կուրատորի փոխարեն դնել բարձր կուրսերի ուսանողների վրա: Ուսանող **Հ.Հովհաննիսյան** պաշտպանեց Ս.Սահակյանի առաջարկությունը և ներկայացրեց սեփական փորձը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Վերականգնել կուրատորի ինստիտուտը, նշված աշխատանքներում ներգրավել նաև ուսանողներին:

3. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան **Վ.Պ.Վարդանյանի** հաղորդումը **Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի հաստատման վերաբերյալ:** Նա մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցն ըստ մասնագիտությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ներկայացված ժամանակացույցը:

4. *ԼՄԵՑԻՆ.* Սերվիսի ամբ.վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչի պաշտոնակատար պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի, Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբ.վարիչ դոց.Ս.Ս.Մկրտչյանի, Ռեզիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի և Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, հաղորդումը **ամբիոններում մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ:**

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

5. *ԼՄԵՑԻՆ.* դեկան Ս.Ա.Գրիգորյանի հաղորդումը Երևանի պետական համալսարանի Գիտական խորհրդի թիվ 6/3 որոշման վերաբերյալ: Դեկան Ս.Գրիգորյանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» կատարված լրացումները, մասնավորապես 3.9 կետն ըստ որի «ԵՊՀ պրոֆեսոր-Էմերիտուս» պատվավոր կոչումը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման գիտական խորհրդի առաջարկությամբ ու ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ շնորհվում է ԵՊՀ-ում առնվազն 30 տարվա գիտամանկավարժական ստաժ (որից առնվազն 10 տարին ԵՊՀ-ում նաև վարչական պաշտոն զբաղեցրած), գիտական աստիճան ու կոչում ունեցող ԵՊՀ աշխատողին երկարատև աշխատանքի, գործունեության և ԵՊՀ զարգացման գործում նշանակալի ներդրման համար: Սույն կոչումը ստացած աշխատողին յոթաքանյուր ամիս վճարվում է հավելավճար, որի չափը հաստատվում է ԵՊՀ հաստիքացուակով»:

ՁԱՅՆ ԽՆԴԵՑ. Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Սուվարյանն, ով իր խոսքում դրական գնահատեց ռեկտորատի որդեգրած քաղաքականությունը՝ չսահմանափակվել և չառաջնորդվել միայն դասավանդելով այլև խրախուսել երկարատև գիտամանկավարժական, վարչական գործունեություն իրականացնող աշխատողներին: Խոսքի ավարտին դոց.Ս.Սուվարյանն «ԵՊՀ պրոֆեսոր-

Էմերիտուս» պատվավոր կոչման շնորհմանն առաջարկեց ֆակուլտետի ղեկան դոց.Մարատ Արիսի Գրիգորյանի թեկնածությունը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ ղեկանի երկարատև գործունեության և պաշտոնավարման հիմքում դրված է հոգատար և սրտացավ վերաբերմունք ֆակուլտետի զարգացման, ուսումնագիտական, նոր կրթական ծրագրերի ներդրման, արտերկրի ուսումնագիտական կենտրոնների կապերի հաստատման և զարգացման ուղղությամբ: **Դոց.Վ.Վ.Գրիգորյանը** նշեց ղեկան Մ.Գրիգորյանի մարդկային որակները, գիտամանկավարժական աշխատանքների կազմակերպման ունակությունները: Գործընկերների և ուսանողների հարցադրումներին ականջալուր լինելը: **Պրոֆ.Պ.Էֆենդյանը** նշեց ղեկանի հետևողական լինելու բնավորությունը, կրթական ծրագրերի զարգացման և պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքները: **Պրոֆ.Ա.Ա.Ավագյանը** նշեց Մ.Գրիգորյանի տարիների լավագույն փորձը, գիտահետազոտական աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու, զեղծարարների, գրագողների և բացասական երևույթների դեմ պայքարելու ջանքերը: **Դոց.Ա.Թ.Գրիգորյանը** նշեց Մ.Գրիգորյանի ունեցած մեծ ներդրումը ուսանողների, ֆակուլտետի ՈւԳԸ, ՈւԽ հետ տարվող աշխատանքներում:

Բոլոր ելույթ ունեցողները պաշտպանեցին դոց.Մ.Ս.Սուվարյանի առաջարկությունը Մ.Ա.Գրիգորյանի թեկնածությունը «ԵՊՀ պրոֆեսոր-Էմերիտուս» պատվավոր կոչմանն առաջադրելու հարցում:

Քվեարկության դրվեց «ԵՊՀ պրոֆեսոր-Էմերիտուս» պատվավոր կոչման թեկնածու ներկայացնելու ղեկան Մարատ Գրիգորյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով միաձայն (Կողմ՝ 31, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0) **ղեկան Մարատ Գրիգորյանին թեկնածությունն առաջարկել** «ԵՊՀ պրոֆեսոր-Էմերիտուս» պատվավոր կոչմանն արժանացնելուն:

6. ԸՆԹԱՅԻՆ Կ ԶԱՐՑԵՐ

6.1. ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հայցորդ **Օֆելյա Առաքելյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի հայցորդ Օֆելյա Առաքելյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

6.2. ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հայցորդ **Իրինա Սահակյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի հայցորդ Իրինա Սահակյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

6.3. ԼՄԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Ս.Մկրտչյանի** հաղորդումը Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ **Շուշանիկ Տիգրանյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Շուշանիկ Տիգրանյանի ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

6.4. ԼՄԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Քելյանի հաղորդումը **մասնագիտական պրակտիկաների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:** Նա ներկայացրեց, որ ներդրվել և կիրարկվել է մասնագիտական պրակտիկաներին ուսանողների մասնակցության և իրականացման ամենշաբաթյա առցանց ստուգման

համակարգ: Ս.Քեյանը դրական գնահատեց մասնագիտական պրակտիկաների նման գործադրումը, որը հնարավորություն ընձեռեց ուսանողներին հնարավորինս ներգրավվել ուսումնական գործընթացին:

ԵԼՈՒՅԹ ՈՆԵՅԱՆ. Դեկան Մ.Ա.Գրիգորյանը, ուսանող Ս.Սահակյանը նշեցին, որ դեկանատի և ամբիոնների ամենօրյա աշխատանքը տվել է իր արդյունքը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան